ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գլխավոր մասնաշենքի տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 17 հուլիսի 2019թ.

Սույն թվականի հուլիսի 17-ին ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի մասնաշենքի տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակցին որոշելու գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի անդամներ՝ Խ. Ժ. Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Տ. Հ. Զաքոյանը և Ս. Պ. Կարապետյանը: Հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը չէր մասնակցում նիստին ամենամյա հերթական արձակուրդում գտվելու պատճառով: Հանձնաժողովի նախագահի պարտականությունների կատարումը վերապահվել են հանձնաժողովի ավագ անդամ Լ.Գ. Սիրունյանին:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության մասին, համաձայն որի «Թիամատ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 28.781 (քսանութ հազար յոթ հարյուր ութսունմեկ) դրամի չափով:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 10-րդ և 35-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- Քանի որ «Թիամատ» ՍՊԸ–ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց պարտավորությունները չեն գերազանցում ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը (գնային առաջարկը՝ 2.880.000 x 1% = 28800 դրամ), ապա 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Թիամատ» ՍՊԸ–ին:
- Առաջարկել «Թիամատ» ՍՊԸ–ին հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- Սույն արձանագրությունը և պայմանագրեր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- Անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

- Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց և անգործության ժամկետի ավարտին օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

հանձնաժողովի նախագահի
պաշտոնակատար՝ Լ. Գ. Սիրունյան

հանձնաժողովի անդամ՝ Խ. Ժ. Սաֆարյան

հանձնաժողովի անդամ՝ Տ. Հ. Զաքոյան

հանձնաժողովի անդամ՝ Ս. Պ. Կարապետյան

հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան